# ՔԱՂԱՔՆԵՐ և ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐ. ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ



one in five
un sur cinq

ամաձայն առկա գնահատումների՝ Եվրոպայում հինգ երեխայից մեկը դառնում է որևէ ձևով կատարվող սեռական բռնության զոհ: Հաշվի առնելով խնդրի ծավալները՝ Եվրոպայի խորհուրդը մեկնարկել է ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավը բարձրացնելու համար յուրաքանչյուրի իրազեկվածության աստիճանը՝ երեխաների, ծնողների և նրանց, ովքեր շփվում են երեխաների հետ՝ աջակցելու համար Եվրոպայի խորհրդի 47 անդամ և այլ պետությունների կողմից Եվրոպայի խորհրդի Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիայի իրականացմանը, որը հայտնի է որպես Լանզարոտեի կոնվենցիա:

Որպես ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին իր ավանդի մի մաս՝ Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը մշակել է **Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների դաշնագիրը** և հորդորում է տեղական և տարածաշրջանային իշխանություններին, ընտրված ներկայացուցիչներին, ինչպես նաև տեղական և տարածաշրջանային իշխանությունների ազգային միավորումներին և այլ կազմակերպություններին մասսայաբար միանալ դրան:

The Congress

Le Congrès

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

## ՆՊԱՍՏԵԼ ԼԱՆԶԱՐՈՏԵԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ

Բոլոր շահառուներին, ովքեր մասնակցում են ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին, կոչ է արվում պրոպագանդել Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որը հայտնի է նաև Լանզարոտեի կոնվենցիա անունով, իրենց ազգային իշխանությունների շրջանում, որպեսզի որքան հնարավոր է շատ պետություններ ստորագրեն և վավերացնեն այս իրավական փաստաթուղթը:

Լանզարոտեի կոնվենցիայի նպատակն է ապահովել համաձայնեցված գործողությունները Եվրոպայում և բոլոր երեխաների հավասար պաշտպանվածությունը՝ հաստատելով հստակ ընդհանուր չափորոշիչներ և սահմանումներ, որոնք կիրառելի են բոլոր եվրոպական երկրներում՝ մասնավորապես ներդաշնակեցնելով քրեական օրենսդրությունը և կիրառելով այլ համապատասխան միջոցներ:

Լանզարոտեի կոնվենցիան բաց էր միանալու համար 2007թ հոկտեմբերի 25-ից Լանզարոտեում, Իսպանիա, և ուժի մեջ է մտել 2010թ հուլիսի 1-ից: Դրա դրույթները նպատակաուղղված են երեխաների սեռական շահագործման և սեռական բռնության կանխարգելմանը, սեռական հանցագործություններից տուժած երեխաների պաշտպանությանը և ոճրագործների դատական հետապնդմանը:

Որպես առաջնային խնդիր ընդգծելով երեխաների էական շահերի պաշտպանությունը՝ Կոնվենցիան ընդգրկում է հետևյալ հիմնական հարցերը՝

- կանխարգելիչ և պաշտպանիչ միջոցառումներ,
- աջակցություն տուժած երեխաներին և նրանց ընտանիքներին,
- ծրագրեր կամ միջոցառումներ երեխային սեռական բռնության ենթարկած հանցագործների համար,
- քրեական հանցագործություններ՝ ներառյալ մի քանի ամբողջությամբ նոր հանցագործություններ, ինչպես օրինակ՝ երեխայի նկատմամբ իբր հոգածության դրսևորումը,
- երեխայի նկատմամբ բարյացակամ ընթացակարգեր հետաքննության և դատական հետապնդման ժամանակ,
- տվյալների արձանագրում և պահպանում սեռական բնույթի հանցագործություններ կատարելու համար դատապարտված անձանց մասին,
- միջազգային համագործակցություն,
- մոնիտորինգի մեխանիզմ:

Լանզարոտեի կոնվենցիայի մասին ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար նայիր՝ www.coe.int/lanzarote

Եվրոպայի խորհուրդը, որը որպես քաղաքական կազմակերպություն հիմնվել է 1949 թվականին, աշխատում է աջակցել ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին ամբողջ մայրցամաքում: Այն նաև մշակում է համընդհանուր պատասխաններ իր 47 անդամ պետություններում առկա սոցիալական, մշակութային և իրավական մարտահրավերներին: Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը ներկայացնում է տեղական և տարածաշրջանային իշխանությունները և խթանում ժողովրդավարությունը բնակչության լայն զանգվածներում: Այն ունի երկու պալատ՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածաշրջանների պալատ և համախմբում է 318 լիիրավ և 318 փոխարինող անդամների, որոնք ներկայացնում են ավելի քան 200000 եվրոպական տարածքային համայնքներ:

CONGRESS OF LOCAL AND REGIONAL AUTHORITIES OF THE **COUNCIL OF EUROPE**
Avenue de l'Europe – F 67075 Strasbourg Cedex / Tel.: +33 (0)3 88 41 21 10 / Fax: +33 (0)3 88 41 37 47
**www.coe.int/congress-oneinfive – congress.oneinfive@coe.int**

# ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻՆ

Քաղաքները և տարածաշրջանները, տեղական և տարածաշրջանային ընտրված ներկայացուցիչները, ինչպես նաև տեղական և տարածաշրջանային իշխանությունների միավորումները և այլ կազմակերպություններ հրավիրվում են մասնակցելու ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին և ներկայացնելու իրենց կողմից իրականացվող քաղաքականությունն ու նախաձեռնությունները:

Տեղական և տարածաշրջանային իշխանությունները, ազգային կառավարությունների հետ համատեղ, կրում են քաղաքացիների մարդու իրավունքների իրականացմանը պաշտպանելու և աջակցելու հիմնական պատասխանատվությունը, որը ներառում է իրենց տարածքում բնակվող երեխաների և երիտասարդների անվտանգության և բարեկեցության ապահովումն ու խթանումը: Այն ծառայությունները, որոնք անհրաժեշտ են սեռական բռնության և չարաշահման զոհերին օգնելու համար, հիմնականում տրամադրվում են տեղական մակարդակում: Սա նաև այն մակարդակն է, որտեղ կանխարգելիչ և իրազեկվածությունը բարձրացնող միջոցառումները կարող են ամենաարդյունավետը լինել: Այնպես որ երեխաների հանդեպ սեռական բռնությունը դադարեցնելու պայքարի առաջնային գծում գտնվում են տեղական և տարածաշրջանային իշխանությունները և հենց նրանք էլ պետք է մշակեն և իրականացնեն գործողության պլանները և ռազմավարությունները՝ դրանցով զբաղվելու և հետագա դեպքերը կանխելու համար:

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսը մշակել է Երեխաների հանդեպ սեռական բռնության դադարեցման քաղաքների և տարածաշրջանների այս դաշնագիրը ուղղորդելու համար սեռական շահագործման և բռնության դեմ մղվող պայքարում իշխանությունների գործողությունները: Այն ներառում է տեղական և տարածաշրջանային մակարդակում իրականացվելիք գործնական նախաձեռնությունների և քաղաքականության մի ցուցակ՝ զարգացնելու համար երեխայի հանդեպ բարյացակամ ծառայությունները, պաշտպանելու երեխաներին և օգնելու կանխել սեռական բռնությունը համայնքի շրջանակներում:

Այս առաջարկությունները հիմնվում են չորս «Գ-ներ»-ի վրա՝ բռնության կանխարգելման, զոհերի պաշտպանության, դատական կարգով ոճրագործների հետապնդման և ողջ ընթացակարգի ժամանակ երեխաների մասնակցության:

## Նախաձեռնությունների մի քանի օրինակներ՝

| | |
|---|---|
| ԱՋԱԿՑԵԼ | ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին տեղական և տարածաշրջանային մակարդակում |
| ԱՎԵԼԻ ԴՅՈՒՐԻՆ ԴԱՐՁՆԵԼ | աջակցման ծառայությունների հասանելիությունը |
| ՍՏԵՂԾԵԼ | բազմապրոֆիլ կենտրոններ |
| ԲԱՐՁՐԱՑՆԵԼ | երեխաների իրազեկվածության աստիճանը դպրոցներում և այլ հաստատություններում |
| ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԵԼ | երեխաների հետ աշխատող շահառուներին |
| ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ | քննարկումներ և տեղեկատվական հանդիպումներ |
| ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ | ՈԿԿ-ների, լրատվամիջոցների և մասնավոր հատվածի հետ |
| ՏԱՐԱԾԵԼ | տեղեկատվական նյութեր |

# ՄԻԱՆԱԼ ԴԱՇՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ

Առցանց հենահարթակը հատուկ ստեղծվել է դյուրին դարձնելու համար տեղեկատվության փոխանակումը և ապահովելու համար ողջ Եվրոպայի կողմից ցուցաբերվող աջակցությունը տեղական և տարածաշրջանային իշխանությունների ջանքերին՝ դադարեցնելու երեխաների հանդեպ սեռական բռնությունը:

Անհատական հասցեն ցանցում տեղական և տարածաշրջանային իշխանություններին, ընտրված ներկայացուցիչներին և միություններին հնարավորություն է տալիս տեղեկացնել իրենց գործունեության բովանդակության մասին առցանց և տեղեկատվություն տարածել իրենց նախաձեռնությունների մասին: Այսպիսով նրանք ունեն օգտագործողի նկատմամբ բարյացակամ ցանցաէջ հրապարակելու համար տեղեկատվություն իրենց միջոցառումների մասին՝ լուսաբանելով դրանք եվրոպական մակարդակում:

Բավական է կատարել երկու քայլ առցանց հենահարթակի միջոցով դաշնագրին միանալու համար:

www.coe.int/congress-oneinfive




1

Ընտրեք մի տարբերակ՝ Տեղական/տարածաշրջանային իշխանությունները ԿԱՄ Միությունները/Կազմակերպությունները և լրացրեք առցանց գրանցման ձևը, ինչն ավտոմատ կերպով կստեղծի մի հասցե գրանցման անունով՝ կազմված ձեր էլեկտրոնային հասցեից և գաղտնաբառից:




2

Այս հասցեի միջոցով ներկայացրեք տեղեկատվություն ձեր նախաձեռնությունների և գործունեության վերաբերյալ, որը կհրապարակվի համապատասխան ինտերնետային ցանցաէջում: